Վերը շարադրված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով հայցվորի կողմից ներկայացված փաստաթղթերին՝ Դատարանն արձանագրում է, որ չի ներկայացվել որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց առ այն, որ հայցվորը պատվիրատուին ներկայացրել է հայտում նշված որակի և տեսակի ապրանք և որ ապրանքը մատակարարվել է սահմանված ժամկետում:

Այսինքն, սույն քաղաքացիական գործում առկա չէ այն ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ նշված <<ունակ>> ապացույցը, որի հմնավորմամբ էլ դատարանը կարող էր եզրահանգել, որ պատասխանողի գործողությունները ոչ իրավաչափ է:

Ամբողջ վերոշարադրյալի հիմնավորմամբ, դատարանը ուսումնասիրելով քաղաքացիական գործը, լսելով կողմերին արձանգրում է, որ քաղաքացիական գործում առկա չէ ոչ մի վերաբերելի և թույլատրելի ապացույց առ այն, որը կհիմնավորեր հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջը:

Ուստի, դատարանը հայցը անհիմն է գնահատում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Հայցը մասնակի բավարարելու մասին դատական ակտ կայացնելիս դատարանը հաշվանցում է հայցվորի և պատասխանողի կրած դատական ծախսերը՝ դրա արդյունքով լրիվ կամ մասնակի ազատելով նրանց հակառակ կողմի կրած դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունից:

Տվյալ դեպքում, քանի որ հացը մերժվում է, ուստի դատարանը գտնում է, որ պետական տուրքի և փաստաբանի խելամիտ վարձատրության հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101,102, 188-192 հոդվածներով՝ դատարանը ՝

Վ Ճ Ռ Ե Ց

<<ԻՆՏԵԼԻՋԵՆԹ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ ՀՀ ոստիկանության և <<ԻՆՏԵԼԻՋԵՆԹ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊ ընկերության միջև 27/06/2022թ. թիվ ՀՀ ՈԷԱՃԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ-2022-1 ծածկագրով կնքված պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և դրա հետ առնչվող պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

Դատարանի 18/01/2023թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովումը՝ սույն վճիռը օրինական ուժ մտնելուց հետո վերացնել:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ռ. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՌՈՒԲԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ